ԱՎԱՆԴԱԿԱՆ

ԿԱՐԾԱԽ. 34-ՐԴ ԱՆԳԱՄ՝ ՋԻՎԱՆԻԱԿԱՆ ԵՐԳՈՎ ՀՄԱՅՎԱԾ

Հուլիսի 7-ին Ախալքալաքիի մունիցիպալիտետի Կարծախ գյուղում նշվեց ավանդական Ջիվանու տոնը:

...Մեծն աշուղ Ջիվանին ծնվել է հենց այս գյուղում 1846 թվականին, Բանգոյենց Ստեփանի ընտանիքում:

Աշուղական արվեստը Ջիվանին սովորում է կարծախցի նշանավոր աշուղ Սիայու մոտ: Երկու տարվա ընթացքում պատանին այնպիսի առաջադիմություն է հանդես բերում, որ նույնիսկ դառնում է իր վարպետի մրցակիցը: Վարպետը հայրաբար օրհնում է իր սանին եւ անունը դնում Ջիվանի:

Ջիվանին մտերմանում է Կարծախ ժամանած աշուղ Սազայու հետ: Երկուսով մեկնում են Թիֆլիս եւ ելույթի համար ընտրում են Կարապետ Սանոսյանի սրճարանը:

1872 թվականին Ջիվանին ամուսնանում է սրճարանատեր Հովհաննես Տալյանի աղջկա՝ Աշխենի հետ: Նրանք ունենում են վեց երեխա. երկու աղջիկ՝ Արաքսյան եւ Հռիփսիմեն, որդիները՝ Գարեգինը, Գուրգենը, Պարույրը եւ Լեւոնը: Որդիները բոլորն էլ եղել են նշանավոր մարդիկ, Գարեգինը ՀՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ էր, գրականագետ, արվեստաբան, պրոֆեսոր:

Ներկայումս աշուղի մեկ տասնյակից ավելի թոռներ ու ծոռներ ապրում են Թբիլիսիում, Երեւանում եւ Մոսկվայում:

1895 թվականին աշուղն ընտանիքով ընդմիշտ տեղափոխվում է Թիֆլիս:

Ընտանիքի նյութական դրությունը բարելավելու ուղղությամբ աշուղի գործադրած բոլոր ջանքերն ապարդյուն են անցնում, կարիքը դառնում է նրա կյանքի մշտական ուղեկիցը:

1909 թվականի աշնանը Ջիվանին ծանր հիվանդանում է եւ ընկնում անկողին: Անօգնական վիճակում հիվանդությունը ծանրանում է եւ տեւում հինգ ամիս: 1909 թվականի մարտի 19-ին վախճանվում է հանճարեղ գուսանը:

Նրա աճյունն ամփոփված է Թբիլիսիի Հայ գրողների եւ հասարակական գործիչների Խոջիվանքի պանթեոնում...

... Թվով 34-րդ Ջիվանիական ավանդական տոնակատարությունը (առաջին անգամ այն տոնվել է 1984 թվականի հուլիսի 27-ին) սկսվեց Կարծախի Սուրբ Կարապետ եկեղեցում մատուցված պատարագով: Այնուհետեւ տոնի մասնակիցները ծաղիկներ խոնարհեցին Մեծն աշուղի արձանին, ապա այցելեցին դեռեւս անցած տարի բացված Ջիվանու տուն-թանգարան:

Հանդիսավոր տոնական արարողությունը ներածական խոսքով բացեց Ախալքալաքիի քաղաքապետ Յուրի Ունանյանը: Ապա ելույթներ ունեցան Հայաստանի Սփյուռքի փոխնախարար Դավիթ Սարգսյանը, Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանը, բանասիրական գիտությունների դոկտոր Սամվել Մուրադյանը, ՋԱՀ-ի Հոգաբարձուների խորհրդի նախագահ Սոս Սահակյանը, Երեւանի ավագանու «Ելք» խմբակցության ղեկավար Դավիթ Խաժակյանը:

Միջոցառմանը ներկա էին Սամցխե-Ջավախեթիի նահանգապետ Կախա Սամխարաձեն, Վրաստանի խորհրդարանի պատգամավորներ Հենզել Մկոյանը, Դավիթ Ճիճինաձեն, Սամվել Մանուկյանը, Հայաստանի Ազգային ժողովի պատգամավոր Շիրակ Թորոսյանը, Նինոծմինդայի քաղաքապետ Անի Մոսոյանը, Ախալքալաքիի եւ Նինոծմինդայի սակրեբուլոների նախագահներ Նաիրի Իրիցյանն ու Սմբատ Կյուրեղյանը, հյուրեր՝ Թբիլիսիից, Երեւանից, Ախալցիխեից, Ծալկայից, Մառնեուլիից, այլ վայրերից:

Տոնի գեղարվեստական մասում ելույթ ունեցան Կարծախի եւ Ասպինձայի մունիցիպալիտետի Դամալա գյուղերի պարի խմբերը, «Ջավախք» երգի-պարի համույթը, Մյունխենի «Անուշ» պարախումբը եւ Երեւանի «Սայաթ-Նովա» աշուղական երգի անսամբլը, եւ Կոմիտասի անվան կոնսերվատորիայի երաժիշտները:

ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՏԵՂԵԿԱՅՐԵՔ ՁԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՅԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻՆ, ԹԵ ԻՆՉ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱԼ ՎՐԱՍՏԱՆ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼԻՍ...

Վրաստանում Հայաստանի դեսպանատունը տեղեկատվական ծանուցագրեր է տպագրել եւ ուղարկել հայ-վրացական սահմանային անցակետեր:

Վրաստանում Հայաստանի դեսպանության պատրաստած տեղեկատվական ծանուցագրերի առաջին խմբաքանակը (20 000 հատ) ուղարկվել է հայ-վրացական սահմանային անցակետեր, որպեսզի տրամադրվեն սահմանը հատել պատրաստվող Հայաստանի քաղաքացիներին:

Ինչպես նշված է դեսպանատան ֆեյսբուքյան էջում, Հայաստանի որոշ քաղաքացիներ, տեղեկատվության պակասի պատճառով, կամ էլ՝ դիտավորությամբ (գաղտնի), սահմանը հատելիս իրենց հետ անցկացնում են Վրաստանի տարածքում արգելված կամ ոչ թույլատրելի չափաքանակով տարբեր ապրանքներ:

Վրաստանում Հայաստանի դեսպանությունը Հայաստանի քաղաքացիներին խորհուրդ է տալիս Վրաստան մուտք գործելիս խիստ, անհրաժեշտորեն տիրապետել ներքոնշյալ տեղեկատվությանը, որպեսզի չենթարկվեն տուգանքների, տույժերի, ինչպես նաեւ՝ քրեական պատասխանատվության, որոնք սահմանված են Վրաստանի ներքին օրենսդրությամբ:

Հայաստանի դեսպանության տեղեկատվական ծանուցագրում թվարկված են այն ապրանքները, որոնց ներկրումը Վրաստանի տարածք հանգեցնում է պատժամիջոցների կիրարկման:

*** Արգելված դեղամիջոցներ.** Վրաստանի տարածք առանց համապատասխան փաստաթղթերի արգելվում է ներմուծել թմրամիջոցներ, հոգեմետ դեղամիջոցներ, ինչպես նաեւ այն համակցված պատրաստուկները, որոնց բաղադրության մեջ առկա են՝ ացետիլդիհիդրոկոդեին, դիհիդրոկոդեին, կոդեին, նիկոդիկոդին, նիկոկոդին, նորկոդեին, ֆալկոդեին, էթիլմորֆին եւ այն համակցված դեղամիջոցները, որոնց բաղադրության մեջ առկա են՝ էֆեդրին, նորէֆեդրին, պսեւդոէֆեդրին (լիրիկա, սուբոտեքս, մետոմորֆին եւ այլն): Խնդրում ենք ստուգել ձեզ մոտ գտնվող յուրաքանչյուր պատրաստուկի կամ դեղամիջոցի բաղադրությունը, քանի որ կան առաջին հայացքից ոչ խնդրահարույց թվացող այնպիսի դեղամիջոցներ, որոնք պարունակում են վերոնշյալ արգելված նյութերը: Առանց համապատասխան փաստաթղթերի վերոնշյալ նյութերն իրենց մեջ պարունակող պատրաստուկներն ու դեղամիջոցները Վրաստան տեղափոխելը համարվում է հանցագործություն՝ ըստ Վրաստանի քրեական օրենսգրքի, եւ օրենքով նախատեսված է պատիժ՝ 7-ից մինչեւ 14 տարվա ազատազրկում:

*** Ծխախոտի թույլատրելի չափաքանակ.** Վրաստան մուտք գործելիս՝ թույլատրվում է տեղափոխել առավելագույնը մինչեւ 200 գլանակ ծխախոտ (10 տուփ): Նշյալ օրենքը խախտելու պարագայում կիրառվում է վարչական տույժ, որը սկսում է 1000 լարիից: Իրավախախտում կատարողի մեքենան կարող է սահմանին առգրավվել եւ ապա աճուրդով վաճառվել:

*** Տրանսպորտային միջոցի պարտադիր ապահովագրում.** 2018 թ. մարտի 1-ից սկսած, Վրաստանի սահմանը հատելիս՝ տրանսպորտային միջոցի վարորդը կամ սեփականատերը պարտավոր է ապահովագրել տրանսպորտային միջոցը: Պարտադիր ապահովագրություն չիրականացրած անձինք կտուգանվեն 100-200 լարի տուգանքով:

*** Զենք.** Եթե ՀՀ քաղաքացին Հայաստանի տարածքում զենք կրելու թույլտվություն ունի, ապա Վրաստան մուտք գործելիս պետք ներկայացնի տվյալ զենքի վկայականն ու թույլտվության վերաբերյալ փաստաթուղթը:

*** Գումարի թույլատրելի չափ.** Վրաստանի տարածք մուտք գործող քաղաքացին իր հետ առանց հայտարարագրելու կարող է տեղափոխել մինչեւ 30.000 լարիի (12.000 դոլար) չափով գումար: Դրանից ավելի գումար տեղափոխելու համար անհրաժեշտ է սահմանին հայտարարագրել այն:

*** Ոսկյա իրերի թույլատրելի չափաքանակ.** Վրաստանի սահմանը հատելիս՝ առանց հայտարարագրելու հնարավոր է տեղափոխել մինչեւ 500 լարի (200 դոլար) ընդհանուր արժողությամբ ոսկյա իրեր: Դրանից ավելի ոսկյա իրեր տեղափոխելու համար անհրաժեշտ է սահմանին հայտարարագրել այն:

* * *

Վրաստանում Հայաստանի դեսպանությունը հորդորում է նաեւ Հայաստանի քաղաքացիներին Վրաստանի սահմանը չգրանցված ավտոմեքենայով հատելու դեպքում ունենալ մեքենայի տիրոջ կողմից տրված լիազորագիրը՝ վրացերենով կամ անգլերենով:

«Հայաստանի Հանրապետության հարգելի՛ քաղաքացիներ, եթե պատրաստվում եք հատել Վրաստանի սահմանը Ձեզ վրա չգրանցված ավտոմեքենայով, ապա խնդրում ենք Ձեզ հետ ունենալ մեքենայի տիրոջ կողմից Ձեզ տրված լիազորագիրը՝ վրացերենով կամ անգլերենով: Թարգմանությունը պետք է հաստատված լինի նոտարի կողմից»,- նշված է դեսպանության տարածած հայտարարության մեջ:

ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ❋ ԱՅԼԱՔԱՆ ❋ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

ԿՅԱՆՔԸ ԵՐԿԱՐԱՑՆՈՂ ՆՅՈՒԹ...

Հայտնի փաստ է, որ դարեր շարունակ մարդկությունը փորձել է գտնել այն դեղամիջոցը, որը կկարողանա երկարացնել կյանքի տեւողությունը: Հետաքրքիր է, կա՞ արդյոք որեւէ տեղաշարժ այդ ուղղությամբ մեր օրերում:

Ք. ՍԻՄՈՆՅԱՆ

Ախալցիխե

Գիտնականները հայտնաբերել են յուրահատուկ ֆերմենտ, որն ազդում է ծերացման գործընթացի վրա: Այս մասին հաղորդվում է EurekAlert պորտալում:

Մարշալի համալսարանի մասնագետները պարզել են, որ նատրիումա-կալիումային ադենոզինտրիֆոսֆատազա կոչվող նյութը մասնակցում է թթվածնի ակտիվ ձեւերի առաջացման ցիկլին՝ երկարացնելով օրգանիզմի երիտասարդությունը:

Հետազոտողները գիտափորձեր են կատարել մկների վրա: Մեկ տարվա ընթացքում կրծողներին տվել են ճարպերի եւ ածխաջրերի բարձր պարունակությամբ սնունդ: Այս «սննդակարգը հանգեցնում է ծերացման արտահայտված նշանների առաջացման, քանի որ օրգանիզմում մեծ քանակությամբ թթվածնային ռադիկալներ են սինթեզվում, որոնք բջիջների օքսիդացում եւ ոչնչացում են հարուցում:

Ըստ որում, մկների այն մասի մոտ, որոնք ֆերմենտի ներարկումներ էին ստացել, համապատասխան գործընթացներն զգալիորեն դանդաղել են: Նաեւ գիտնականներն անհրաժեշտ թեստավորումներ են կատարել մարդու շարակցական հյուսվածքի բջիջների վրա՝ ստանալով համանման արդյունքներ: Մասնագետներն ընդգծում են, որ կլինիկական փորձարկումներից հետո ֆերմենտը կարող է հակատարիքային թերապիայի հիմք դառնալ:

ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՆԻՀԱՐԵԼՈՒ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԻՋՈՑԸ ԿԱԼՈՐԻԱՆԵՐ ՀԱՇՎԵԼՆ Է

Արդեն հոգնել եմ տարբեր դիետաների դիմել: Օգուտ չկա: Չգիտեմ՝ ինչպե՞ս վարվել: Գուցե դո՞ւք օգնեք:

Ն.Ս.

Թբիլիսի

Մարդիկ անընդհատ փնտրում են այնպիսի դիետա, որը կլուծի ավելորդ քաշի խնդիրը: Սովորաբար, ամեն ինչ հանգեցնում են ճարպերի, ածխաջրերի ու սպիտակուցների տոկոսային հարաբերության հաշվարկին: Սակայն, իրականում դա այդքան էլ կարեւոր չէ, քանի որ կալորիաներն ամեն դեպքում հասնում են օրգանիզմ: Այսինքն, պետք է հաշվել հենց դրանք, ասվում է Ջորջ Բրեյի հաշվետվության մեջ:

Ըստ նրա, ճարպերի, ածխաջրերի ու սպիտակուցների պարունակությամբ դիետա պահող մարդկանց մոտ էական տարբերություններ չի գրանցվել: Դա հակասում է նախկինում անցկացված ուսումնասիրություններին, որոնք փաստում են ածխաջրերի ցածր պարունակությամբ դիետաների դրական կողմերի մասին:

Վերջին ուսումնասիրությունների ընթացքում՝ մասնագետներն ուսումնասիրել են հարյուրավոր գեր մարդկանց՝ խորհուրդ տալով նրանց օգտագործել ճարպերի, ածխաջրերի ու սպիտակուցների տարբեր պարունակությամբ դիետաներ՝ խառը հերթականությամբ: Յուրաքանչյուր դիետա պետք է կրճատեր կալորիաների ամենօրյա օգտագործումը մինչեւ 750 կկալ:

Վեց ամիս անց, ապա նաեւ երկու տարի անց, գիտնականները հետազոտեցին կամավորներին: Վեց ամիս անց, կամավորները կորցրին ավելի քան 4 կգ ճարպ ու 2 կգ մկանային զանգված: Երկու տարի անց, զանգվածի անկումը կազմում էր 3,6 կգ:

Ընդ որում, կալորիաների 20 տոկոսը գալիս էր սպիտակուցային սննդից՝ չնայած դիետաների տարբերությանը: Ստացվում է, որ կարելի է պարզապես հաշվել կալորիաները՝ ընտրելով այնպիսի սննդակարգ, որն առավել գերադասելի է:

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է

ՄԻ ՔԱՆԻ ՀԵՏԱՔՐՔԻՐ ՓԱՍՏ՝ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

✸ Ամեն տարի ողջ աշխարհում արտադրվում է 165000 նոր ավտոմեքենա:

✸ Բոլորի կողմից սիրված նոր ավտոմեքենայի բույրը պարունակում է 50 թռչող օրգանական միացություն, որը կարող է վնասակար ազդեցություն թողնել մարդու առողջության վրա:

✸ Տեսականորեն ավտոմեքենայով վեց ամսում կարելի է հասնել Լուսին, եթե պահպանվի 95կմ/ժամ արագություն:

✸ Միջին վիճակագրական ավտոմեքենան կազմված է 30000 մասից:

✸ «Ռոլս-Ռոյս»-ի գործարաններում արտադրված ավտոմեքենաների 75 տոկոսը մինչեւ օրս օգտագործվում է:

✸ Շվեյցարիայում արագությունը գերազանցելու համար գանձվող տուգանքները նշանակվում են խախտողի եկամուտներին համաչափ: Ամենամեծ տուգանքը կազմում է 1 մլն դոլար՝ 290կմ/ժամ արագության համար:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

ՆՅԱՐԴԵՐԸ՝ ԲԱԶՄԱԹԻՎ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՃԱՌ

Բազմաթիվ լուրջ հիվանդություններ զարգանում են նյարդերի պատճառով: Հուզական լարվածությունը, տարածվելով մկանների վրա՝ որպես կանոն, դառնում է գլխացավի, աղային կուտակումների առաջացման պատճառ:

Չարտահայտած վիշտը վերածվում է բրոնխիալ ասթմայի, մշտական գրգռվածությունը վնասում է ստամոքսը, տագնապը խախտում է սրտի աշխատանքի ռիթմը, բարկությունն ազդում է լյարդի եւ լեղապարկի գործունեության վրա, անցանկալի մարդկանց հետ պարտադրված շփումները հանգեցնում են քրոնիկական հարբուխի, սիրելի աշխատանքով զբաղվելու անկարողությունը մեծացնում է ուռուցքային հիվանդությունների առաջացման հավանականությունը, անփոխադարձ սերը եւ քնքշանքի կարիքը կարող են առաջացնել մաշկային հիվանդություններ:

Այն մարդկանց, որոնք հակվածություն ունեն հիվանդանալու նյարդերի պատճառով, մասնագետները, կախված հուզական արձագանքներից, բաժանում են երկու խմբի՝ ակտիվների եւ պասիվների: Նրանք ունեն թույլ բնավորություն, բարձր հուզականություն, սթրեսային իրավիճակներում ընդունակ չեն վերահսկել իրենց եւ հանգամանքները, ճիշտ չեն գնահատում կատարելիք գործողությունները, քանի որ հույզերն ու զգացմունքները խեղաթյուրում են դրանք:

Ակտիվներն այն մարդիկ են, որոնք հույզերը չեն պահում իրենց մեջ, շփվող են, եռանդուն: Եթե հանգամանքների բերումով ուժեղ զգացմունքները զսպում են, ապա հավանական է դառնում այնպիսի հիվանդություններով հիվանդանալը, ինչպիսիք են զարկերակային հիպերտոնիան, սիրտ-անոթային խանգարումները, միգրենը:

Պասիվները բոլոր հույզերն ու զգացմունքներն իրենց մեջ են պահում: Նրանք խոհուն են, փակված, միշտ աշխատում են պատսպարվել խնդիրներից, դրանք տեղափոխել ուրիշի ուսերին եւ ընկնում են կախվածության մեջ: Այդպիսի մարդիկ ընկրկում են հանգամանքների առջեւ, իսկ օգնություն փնտրելիս հակված են ինքնախարազանման: Վերջինիս հետեւանքով, նրանք բառացիորեն քայքայում են իրենց առողջությունը: Նրանց օրգանիզմում ավելանում է աղաթթվի արտազատումը, քայքայվում է ստամոքսի լորձաթաղանթը: Խոցի առաջացմանը զուգընթաց, մեծանում է գաստրիտի եւ կոլիտի, աղիների բորբոքման ախտանիշի վտանգը, առաջանում է քրոնիկ փորկապության կամ լուծի, ինչպես նաեւ բրոնխիալ ասթմայի հակվածություն:

Այս կամ այն հիվանդությանը հակվածությունը, մասնագետների կարծիքով, կրում է հոգեբանական բնույթ, գնում է արմատներով դեպի վաղ մանկություն: Հասուն մարդկանց մոտ հիվանդությունները հիմնականում առաջանում են սթրեսային իրավիճակների պատճառով, որոնց նրանք բախվել են մանկության տարիներին:

ՕԳՏԱԿԱՐ ԽՈՐՀՈՒՐԴ

Որպեսզի մանրուքների պատճառով չնյարդայնանաք, համախ շնչեք լավանդայի եւ հազրեվարդի բույրերը, դրանք գիշերը հանգիստ քուն կպարգեւեն, իսկ ցերեկը կկարգավորեն նյարդերը:

ԿԻՆ - ՏՂԱՄԱՐԴ՝ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ - ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅՈՒՆ



✓ Տղամարդիկ խոսում են ուտելուց հետո, կանայք՝ ուտելու ընթացքում;

✓ Երբ խորամանկ է տղամարդը, ապա նա սրիկա է, իսկ երբ խորամանկ է կինը, նա իմաստուն է:

✓ Ամուսնալուծված տղամարդը ազատ է, ամուսնալուծված կինը՝ միայնակ:

✓ Տղամարդիկ չեն սիրում սերն առանց սեքսի, կանայք՝ սեքսն առանց սիրո:

✓ Տղամարդիկ պլանավորում են, կանայք՝ երազում:

✓ Տղամարդիկ թաքցնում են իրենց եկամուտը, կանայք՝ տարիքը:

✓ Տղամարդիկ սիրում են աչքերով, կանայք՝ ականջներով:

✓ Տղամարդիկ չեն կարող հանդուրժել դատարկ շշերը եւ գրպանները, կանայք՝ դատարկ սառնարանն ու դատարկ փոստարկղը:

Այսքան հակասության մեջ ունենք նաեւ ընդհանրություններ. մենք բոլորս փնտրում ենք մեր երկրորդ կեսին: Եվ բոլորս ուզում ենք լինել երջանիկ ու հասկացված: Թող մեկը սիրի աչքերով, մյուսը՝ ականջներով, բայց սիրո օրգանը երկուսի մոտ էլ սիրտն է: Այնպես որ, սիրեք միմյանց անկախ ամեն ինչից:

ԱՆԵԿԴՈՏՆԵՐ

☺ Ամուսինը գործուղումից վերադառնում է ու խոստովանում, որ կորցրել է նշանի մատանին:

- Չեմ հասկանում, ախր ո՞նց հաջողացրիր:

- Դո՛ւ ես մեղավոր: Հազար անգամ ասել եմ, որ գրպանս ծակ է:

☺ - Մայրի՛կ, այսօր երեք աղջիկ մեզ հյուր կգան: Դու կարո՞ղ ես գուշակել, թե նրանցից որի հետ եմ պատրաստվում ամուսնանալ:

Երեկոյան.

- Գուշակեցի՞ր:

- Այո՛, մեջտեղի նստածը:

- Ճիշտ է, բայց ինչպե՞ս գլխի ընկար:

- Գալու պահից նա սկսեց նյարդերիս վրա ազդել:

☺ - Գիտե՞ս, սիրելի՛ս, նոր տրանսպորտում մեկը ինձ օրիորդ անվանեց:

- Հա՞, երեւի մտածել է, որ էշը կարող է քեզ հետ ամուսնանալ:

☺ Մի մարդու կինը հիվանդանում է: Ամուսինը անասնաբույժի է գտնում-բերում: Անասնաբույժն ասում է.

- Վիճակը լուրջ է, եթե երկու օրից չվերականգնվի, կմորթեք...

☺ Կինը՝ ամուսնուն.

- Մենք մի հին գիրք ունեինք՝ «Ինչպես ապրել 100 տարի» վերնագրով: Աչքովդ չի ընկե՞լ:

- Ես դա վառել եմ:

- Ա՜յ քեզ բան: Ինչո՞ւ:

- Մայրդ էր ուզում կարդալ:

☺ - Տես հլը՝ ի՜նչ մեծ է փորդ: Ախր կպայթես, բալիկ ջան:

- Էհ, պապ ջան... եթե ես քեզ ողջ ճշմարտությունն ասեմ... ախր կգժվես, պապիկ ջան:

☺ Մի կին պատմում է ընկերուհուն.

- Երեկ ամուսնուս հետ շատ անհարմար իրավիճակում հայտնվեցինք: Նստած էինք երկուսով, մեկ էլ հանկարծակի դուռը ծեծեցին... Երկուսս էլ, սովորության համաձայն, վազեցինք դեպի պահարանը...

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՎԱՐՉԱՊԵՏ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ՝ ՆԱՏՕ-Ի ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Նիկոլ Փաշինյանը վերը նշված պետությունների ղեկավարների եւ ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի հետ քննարկել է երկկողմ եւ բազմակողմ հարաբերությունների զարգացման հեռանկարներն ու երկուստեք հետաքրքրություն ներկայացնող տարբեր հարցեր:

Կանադայի վարչապետ Ջասթին Թրյուդոն վերահաստատել է իր մասնակցությունն աշնանը Երեւանում կայանալիք Ֆրանկոֆոնիայի 17-րդ գագաթաժողովին եւ նշել, որ Հայաստանում եղել է դեռեւս 1988 թվականին՝ հոր հետ ու մեր երկրի հետ կապված լավ եւ դրական հիշողություններ ունի:

Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը, Ուկրաինայի նախագահ Պյոտր Պորոշենկոն եւ Հունաստանի վարչապետ Ալեքսիս Ցիպրասը վարչապետ Փաշինյանին հրավիրել են իրենց երկրներ: Նրանք կարեւորել են Հայաստանի հետ երկկողմ համագործակցության ընդլայնումը մի շարք ոլորտներում եւ համոզմունք հայտնել, որ ՀՀ նոր կառավարության հետ կծավալվի արդյունավետ գործակցություն: Իտալիայի վարչապետն ընդգծել է Հայաստանի հետ պատմականորեն ամուր բարեկամական կապերի առկայությունը եւ կարեւորել դրանց հետագա ամրապնդումն ու զարգացումը:

Վարչապետը եւ ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարը քննարկել են Հայաստան-ՆԱՏՕ համագործակցության ընթացքին առնչվող հարցեր:

Հայաստանի վարչապետը Բրյուսելում հանդիպումներ է ունեցել նաեւ Եվրամիության կառույցների ղեկավարների հետ: Մասնավորապես, նա հանդիպել է Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ժան-Կլոդ Յունկերի եւ Եվրոպայի խորհրդի նախագահ Դոնալդ Տուսկի, Եվրոպական հանձնաժողովի փոխնախագահ, ԵՄ արտաքին հարաբերությունների եւ անվտանգության քաղաքականության հարցերով բարձր ներկայացուցիչ Ֆեդերիկա Մոգերինիի հետ:

Հանդիպումների ընթացքում կողմերը քննարկել են Հայաստան-Եվրամիություն հարաբերությունների խորացմանը, փոխգործակցության ընդլայնմանն առնչվող հարցեր:

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՎԱՔԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՏ

Հուլիսի 7-ին Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանը Ծաղկաձորում հանդիպեց Համահայկական երիտասարդական հավաքի մասնակիցների հետ: Հանդիպումն սկսվեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն հայոց կաթողիկոսի աղոթքով:

Արմեն Սարգսյանը պատասխանել է նաեւ հավաքի մասնակիցների հարցերին:

Նշենք, որ «Դեպի հայրենիք, դեպի Սուրբ Էջմիածին» կարգախոսով անցկացվող հավաքը, որը կազմակերպվել է Ամենայն հայոց կաթողիկոսի կողմից 2018 թվականը Երիտասարդության տարի հռչակելու ծրագրի շրջանակում, համախմբում է Հայաստանից ու Արցախից, ինչպես նաեւ աշխարհի ավելի քան 20 երկրից ժամանած շուրջ 400 երիտասարդի:

Հավաքի մասնակիցների հետ շփման ընթացքում հիմնականում անդրադարձ է կատարվել ազգային ինքնության, եկեղեցու եւ քրիստոնեության, հայրենասիրության թեմաներին:

«ԲԻԶՆԵՍ ԱՐՄԵՆԻԱՆ» ԱԿՆԿԱԼՈՒՄ Է 35 ՄԻԼԻՈՆ ԴՈԼԱՐԻ ՆԵՐԴՐՈՒՄ

Ներդրումների ներգրավմամբ եւ արտահանման խթանմամբ զբաղվող «Բիզնես Արմենիան» 2018 թվականին 35 միլիոն դոլարից ավելի ներդրում է ակնկալում Հայաստանում: Այս մասին հայտարարեց կառույցի գործադիր տնօրեն Արմեն-Ավակ Ավակյանը:

Նրա խոսքով, այս պահի դրությամբ, արդեն 15,2 միլիոն դոլարի ներդրման ակնկալիք ունեն: Ներդրումները կբաշխվեն թեթեւ արդյունաբերության (5,7 միլիոն դոլար), օծանելիքի (500 հազար դոլար), խոհանոցային պարագաների ու այլ սարքավորումների (1 միլիոն դոլար), բուսական յուղերի եւ հավելումների (3 միլիոն դոլար), հանքային ջրերի (5 միլիոն) արտադրության ոլորտներում: 2018 թվականի երկրորդ կեսի համար էլ ակնկալվում է 20,2 միլիոն դոլարի ներդրում:

Ինչ վերաբերում է նախորդ տարի կառույցի միջոցով դեպի Հայաստան ներդրումների ներգրավմանը, ապա 15 միլիոն դոլարից առյուծի բաժինը՝ 12 միլիոնը, ուղղվել է ռազմարդյունաբերությանը, մնացածը բաշխվել՝ ոսկերչության, արծաթյա զարդերի, թեթեւ արդյունաբերության, թղթի եւ սննդի վերամշակման ոլորտներին:

ԶՈՐԱԿՈՉՎԱԾՆԵՐԻ ԹՎՈՒՄ Է ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻ ՈՐԴԻՆ

Հայաստանի պաշտպանության նախարար Դավիթ Տոնոյանը վստահեցնում է՝ այս տարի զորակոչվողների թվում լինելու են ավելի շատ նախկինում չզորակոչվածներ, այդ թվում՝ նաեւ խոշոր գործարարների որդիներ:

- Այս զորակոչի գլխավոր փոփոխությունը տրամադրվածությունն է դեպի ծառայություն: Գործնական քայլերից է այն, որ զորակոչվողների մեջ կլինեն ավելի շատ նախկինում չզորակոչվածներ, այդ թվում՝ հնարավոր է նաեւ լինեն խոշոր գործարարների որդիներ,- ասաց նախարարը:

Նշենք, որ զորակոչվածների թվում են նաեւ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի, պաշտպանության նախարար Դավիթ Տոնոյանի որդիները: Ընդ որում, Նիկոլ Փաշինյանի որդին՝ Աշոտ Փաշինյանը, զորակոչվել է Արցախի պաշտպանության բանակ, առանց վիճակահանությանը մասնակցելու, իր դիմումի համաձայն:

ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ Է ՀՐԱԺԱՐԱԿԱՆԻ ԴԻՄՈՒՄ

Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը հրաժարականի դիմում է ներկայացրել: Հրաժարականի մասին քաղաքապետը տեղեկացրել է երեւանցիներին հղված ուղերձում, որտեղ մասնավորապես, նա շնորհակալություն է հայտնում Երեւանի ավագանու, Երեւանի քաղաքապետարանի եւ վարչական շրջանների աշխատակազմերին, գործընկեր կառույցներին եւ անհատներին համատեղ աշխատանքի ու միասին անցած ուղու համար:

Ավելացնենք, որ Երեւանում Ավագանու վերջին ընտրությունն անցկացվել է 2017 թվականի մայիսին: Առավելագույն ձայներով Տարոն Մարգարյանը ընտրվել էր Երեւանի քաղաքապետ: Մինչ այդ, նա եղել է Երեւան քաղաքի Ավան համայնքի ղեկավար, Երեւանի ավագանու անդամ, Երեւանի քաղաքապետի առաջին տեղակալ: Իսկ 2011 թվականի նոյեմբերին Երեւան քաղաքի ավագանու կողմից ընտրվել է Երեւանի քաղաքապետ: Այդ պաշտոնում վերընտրվել է 2013 եւ 2017 թվականներին՝ Երեւանի ավագանու ընտրությունների արդյունքներով:

Նշենք, որ Երեւանի քաղաքապետի հրաժարականի դեպքում, «Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի հոդված 46-ի համաձայն, քաղաքապետի արտահերթ ընտրություններն անցկացվում են քաղաքապետի պաշտոնը թափուր մնալուց հետո ավագանու սահմանած ժամկետում, սակայն ոչ ուշ, քան մեկամսյա ժամկետում: Քաղաքապետի արտահերթ ընտրություններն անցկացվում են քաղաքապետի ընտրությունների համար սահմանված կարգով:

ԿԱՅԱՑԱՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԱԳ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Հուլիսի 11-ին Բրյուսելում կայացավ Հայաստանի եւ Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Զոհրաբ Մնացականյանի եւ Էլմար Մամեդյարովի հանդիպումը: Հանդիպմանը մասնակցեցին նաեւ Մինսկի խմբի համանախագահները եւ ԵԱՀԿ գործող նախագահի անչնական ներկայացուցիչ Անջեյ Կասպրշիկը: Սա Հայաստանում ներքաղաքական փոփոխություններից եւ նոր կառավարության չեւավորումից հետո երկու երկրների ԱԳ նախարարների առաջին հանդիպումն է: Ավելի վաղ, Բրյուսելում մեկնարկել էր ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանի եւ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հանդիպումը:

ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹ՝ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՄԱՐ

Հայաստանի նախագահ, «Հայաստան» համահայկական հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի նախագահ Արմեն Սարգսյանը նամակով դիմել է Հոգաբարձուների խորհրդի անդամներին՝ առաջարկելով ընդունել Հիմնադրամի գործադիր տնօրեն Արա Վարդանյանի հրաժարականի դիմումը: Միաժամանակ, երկրի նախագահն առաջարկում է «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր վարչության ղեկավարումը ժամանակավորապես դնել Հոգաբարձուների խորհրդի անդամ, Ֆրանսիայի տեղական մարմնի ատենապետ Պետրոս Թերզյանի վրա, այնուհետեւ հայտարարել բաց մրցույթ՝ Հիմնադրամի գործադիր տնօրենի թափուր պաշտոնի համար:

ՊԱՏԱՐԱԳ՝ ԻՏԱԼԻԱՅԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՁԵՌՍՄԲ

Իտալայի ուխտավորների եռօրյա այցը Հայաստան ավարտվեց Սուրբ պատարագով: Կաթողիկե եկեղեցու արքեպիսկոպոս Գուալթերո Բասետթիի գլխավորած պատվիրակությունը, որի կազմում էին նաեւ Հռոմի կաթողիկե եկեղեցու 5 եպիսկոպոս, ուխտագնացության ընթացքում եղել են Հայաստանի սրբավայրերում, հանդիպումներ ունեցել այն բարեգործական կառույցների ու հաստատությունների հետ, որոնց միջոցով Հայաստանում Իտալիայի կաթողիկե եկեղեցին մի շարք սոցիալական ծրագրեր է իրականացնում: 2017 թվականի մայիսից կարդինալ Բասետթին 5 տարվա ժամանակաշրջանով ընտրվել է Իտալիայի եպիսկոպոսական ժողովի նախագահ: Այցի ավարտին, ֆեռամբ կարդինալ Բասետթիի եւ Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի, Արեւելյան Եվրոպայի հայ կաթոլիկների առաջնորդ Տեր Ռաֆայել արքեպիսկոպոս Մինասյանի Հայ կաթողիկե աթոռանիստ Գյումրու Սրբոց Նահատակաց եկեղեցում մատուցվել է Սուրբ պատարագ:

ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ Է ՎՐԱՅԵՐԵՆՈՎ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԸ

Շուրջ երկու տարվա դադարից հետո, Հայաստանի հանրային ռադիոյում հուլիսի 11-ին կրկին հնչեց վրայերենը: Հանրային ռադիոյի ղեկավարությունը որոշել է վերականգնել վրաց լեզվով հաղորդումները: Նշենք, որ վրայերեն հաղորդումները դադարեցին 2016-ի ապրիլին, երբ հանրային ռադիոյի երկարամյա տնօրեն Արմեն Ամիրյանն այլ պաշտոն ստանձնեց, իսկ նրան փոխարինելու եկած, այժմ ՀՀ ազգային ժողովի պատգամավոր Արման Սաղաթելյանը դրանք ոչ նպատակահարմար համարեց: 2017-ի հունիսին ռադիոյի տնօրեն նշանակված Մարկ Գրիգորյանն ասում է, որ տնօրեն դառնալու պահից վրացական ծառայության վերականգնումը հրատապ է համարել:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՎԱՐԴԱՎԱՌԸ՝ ՎԻՐԱՀԱՅՈՅ ԹԵՄՈՒՄ

2018 թվականի հուլիսի 8-ին Հայ Առաքելական Սուրբ եկեղեցին տոնում էր Հիսուս Քրիստոսի Պայծառակերպությունը (Վարդավառ):

Տոնը հավուր պատշաճի նշվեց Վիրահայոց թեմի եկեղեցիներում: Թեմի եկեղեցիներում մատուցվեց օրվան նվիրված Սուրբ եւ անմահ պատարագ: Մոռացության չմատնվեց նաեւ ավանդական միմյանց վրա ջուր ցողալու սովորությունը, որն ուրախ տրամադրություն էր ստեղծել ինչպես ջրողների, այնպես էլ՝ ջրվողների մոտ: Օրվան նվիրված կազմակերպվեցին ուխտագնացություններ տարբեր սրբավայրեր՝ ինչպես Մայր հայրենիքում, այնպես էլ՝ Վրաստանի հայաբնակ տարածաշրջաններում:

ԶԳՈՒՇԱՑՈՒՄ ՎԱՐՈՐԴՆԵՐԻՆ

ՎԱՆԱՁՈՐ-ԱԼԱՎԵՐԴԻ ՃԱՆԱՊԱՐՀԸ ՄԵԿ ԱՄՍՈՎ ՓԱԿՎԵԼ Է

Վանաձոր-Ալավերդի մայրուղին 1 ամիս փակ կլինի բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների համար:



Վանաձոր-Ալավերդի ճանապարհի 24-րդ կիլոմետրում գտնվող թունելում իրականացվող շինարարական աշխատանքների պատճառով՝ Վանաձոր-Ալավերդի (Մ-6) մայրուղին շուրջ 1 ամիս ժամը 08:00-20:00-ն փակ կլինի բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների համար:

Ստացված տեղեկատվության համաձայն, ժամը 20:00-08:00-ն ընկած ժամանակահատվածում ճանապարհը բաց կլինի միայն թեթեւ մարդատար ավտոմեքենաների համար:

Տրանսպորտային միջոցների համար սահմանվել է հետեւյալ այլընտրանքային երթուղին.

Երեւան - Սեւան - Իջեւան, Ոսկեպար - Նոյեմբերյան - Վրաստանի սահման, եւ Երեւան - Սպիտակ - Վանաձոր, Վանաձոր - Դիլիջան ճանապարհահատվածներով:

Ներհամայնքային երթեւեկությունը դեպի Ալավերդի, Վանաձոր քաղաքներ եւ մոտակա բնակավայրեր՝ Վանաձոր-Ստեփանավան-Ագարակ-Կողես-Այգեհատ-Օձուն-Ալավերդի-Վրաստանի սահման ավտոճանապարհով:

ԵՂԱՆԱԿ

32,5°C ԴԵՊՔՈՒՄ ԲՈԼՈՐ ՏԵՍԱԿԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՊԵՏՔ Է ՍԱՀՄԱՆԱՓԱԿՎԵՆ

Վրաստանի կառավարության կողմից հաստատված արտադրական ընթացակարգի համաձայն, 32,5°C դեպքում աշխատելը թույլատրելի է միայն մեկ ժամով եւ այն էլ գրասենյակային պայմաններում: Խոսքը վերաբերում է երկրի կառավարության 2014 թվականի հունիսի 15-ին ընդունած թիվ 69 որոշմանը եւ սույն որոշմամբ սահմանված նորմերին:

Ինչպես պարզաբանեցին արհեստակցական միությունների ծառայությունում, 32,5°C դեպքում, բոլոր աշխատանքները պետք է սահմանափակվեն այն արտադրություններում, որտեղ չեն պահպանվում միկրոկլիմայական առաջադրված պայմանները:

Ըստ փաստաթղթի, շոգ պայմաններում աշխատանքը թույլատրելի է հետեւյալ ինտենսիվությամբ. արտադրություններում, որտեղ էլեկտրաէներգիայի ծախսը ժամում գերազանցում է 1220 կկալ, եւ նախատեսում է նստակյաց աշխատանք, ինչը պահանջում է ֆիզիկական լարվածություն՝ 32,5°C դեպքում աշխատելը թույլատրելի է միայն երկու ժամ:

Վերոնշյալ ջերմաստիճանի դեպքում, երեքժամյա աշխատանք է թույլատրվում գրասենյակային եւ այլ աշխատանքներում, որտեղ ծանրաբեռնվածությունը ցածր է:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹ

ԱՆԱՀԻՏ ՍՏԵԼՄԱՇՈՎԱՅԻ ՆՈՐ ՀԱՂԹԱՆԱԿԸ

Հուլիսի 3-8-ը Իտալիայի Պեզարո քաղաքում անցկացվեց դասական երաժշտության «Ապագայի աստղեր - 2018» միջազգային մրցույթ- փառատոնը, որին տարբեր երկրների պատանի երաժիշտների հետ միասին մասնակցում էր վրաստանցի շուրջ 20 կատարող:

Մրցույթ-փառատոնին արտակարգ հաջողության հասավ ախալքալաքցի, այսօր Թբիլիսիի Եվգենի Միքելաձեի անվան թիվ 2 երաժշտական դպրոցի սան, մի շարք փառատոների հաղթող, 12-ամյա դաշնակահարուհի Անահիտ Ստելմաշովան: Դասական երաժշտության 8-րդ միջազգային փառատոնից Վրաստանը ներկայացնող Անահիտ Ստելմաշովան ոչ միայն արժանացավ առաջին մրցանակի, այլեւ վաստակեց 2019 թվականին Իտալիայում համերգ ունենալու հնարավորություն:

Անահիտ Ստելմաշովան տարբեր կատարումներով հանդես է եկել Իտալիայի երեք քաղաքներում կայացած համերգների ժամանակ:

Փառատոնի գլխավոր մրցանակին՝ «Գրան-պրիին» արժանացավ Թբիլիսիի Զ.Փալիաշվիլու անվան «Տաղանդների տասնամյա» երաժշտական կենտրոնական դպրոցի սան, 15-ամյա դաշնակահար Ցոտնե Սիդամոնիձեն:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԱՅԻՆ ՀԱՄԵՐԳԸ՝ «ՀԱՅԱՐՏԱՆԸ»

Վիրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնում կայացավ կենտրոնի դուդուկի, դհոլի խմբերի եւ «Տարոն» պարային համույթի հաշվետու համերգը: Համերգային ծրագրում ընդգրկվել էին այն համարները, որոնք խմբակները յուրացրել են ուսումնական տարվա ընթացքում:

Ստեղծագործական խմբերի կատարողական վարպետությամբ եւ դրսեւորած հուզականությամբ միջոցառումը դարձավ «Հայարտուն» մշակույթի կենտրոնի առաջընթացի վկայությունը: Առանձին կատարումներով հանդես եկան պարային «Տարոն» (պարուսույց՝ Սուրեն Աբրահամյան), դուդուկի (ուսուցիչ՝ Իվանե Մկրտչյան), դհոլի (ուսուցիչ՝ Ռոբերտ Կաշավանիձե) խմբերի սաները, մենակատար Աիդա Բազոյանը:

Հաշվետու համերգն արժանացավ Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի օրհնությանն ու գնահատանքին:

ՖՈՒՏԲՈԼ

ԵԶՐԱՓԱԿԻՉՈՒՄ՝ ՖՐԱՆՍԻԱ-ԽՈՐՎԱԹԻԱ

Այսպիսով, հայտնի դարձան Ռուսաստանի քաղաքներում անցկացվող ֆուտբոլի աշխարհի առաջնության բարձրագույն պարգեւներին հավակնող թիմերը:

Ինչպես արդեն հաղորդել ենք, տարվա առաջնությունը աչքի էր ընկնում անակնկալներով: Խմբային մրցաշարից հետո, մեկ ութերորդ եզրափակիչ փուլին հաջորդած քառորդ եզրափակչի հանդիպումների առաջնությունից դուրս մղեցին այնպիսի թիմերի, ինչպիսիք էին Բրազիլիայի, Արգենտինայի, Ուրուգվայի, Ռուսաստանի եւ Շվեդիայի հավաքականները:

Առավել մեծ անակնկալ մատուցեցին կիսաեզրափակիչ փուլի խաղերը: Բոլորի համար անսպասելի եզրափակչի ուղեգիր նվաճեց Խորվաթիայի հավաքականը, որն իր մրցաշարային ճանապարհին, լրացուցիչ ժամանակամիջոցում եւ 11 մետրոնոց հարվածներով հաղթահարեց առաջնության տանտերերի՝ Ռուսաստանի, ապա՝ Անգլիայի արգելքները: Եզրափակիչ փուլի ուղեգիր նվաճեց նաեւ Ֆրանսիայի թիմը, որը մրցաշարից դուրս մղեց Ուրուգվայի, ապա՝ Բելգիայի հավաքականներին:

Հուլիսի 13-ին Սանկտ Պետերբուրգում կանցկացվի առաջնության բրոնզե մեդալների համար հանդիպումը Բելգիայի եւ Անգլիայի թիմերի միջեւ, իսկ հաջորդ օրը՝ հուլիսի 14-ին Մոսկվայում, Ֆրանսիայի եւ Խորվաթիայի հավաքականները կխաղարկեն առաջնության գլխավոր պարգեւը՝ աշխարհի չեմպիոնի կոչումը:

ԱՆՅԿԱՅՎԵՅ ՎԼԱԴԻՄԻՐ ԵՎ ԳԱՅՈՍ ՂԱՐՍԼՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ ՀՈՒՇԱՄՐՅԱՆՑԸ

Հուլիսի 7-ին Նինոծմինդայում անցկացվեց Վլադիմիր եւ Գայոս Ղարսլյան եղբայրների հիշատակին նվիրված հերթական՝ 22-րդ ֆուտբոլի մրցաշարը:

Մրցաշարին ներկա էին Սամցխե-Ջավախեթիի նահանգապետ Կախա Սամխարաձեն, Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Հենզել Մկոյանը, Նինոծմինդայի քաղաքապետ Անիվարդ Մոսոյանը, Նինոծմինդայի մունիցիպալիտետի սակրեբուլոյի նախագահ Սմբատ Կյուրեղյանը, ՋԱՀ-ի Հոգաբարձուների խորհրդի նախագահ Սոս Սահակյանը, գործադիր տնօրեն Աշոտ Հակոբյանը, ուրիշներ: Այստեղ էին նաեւ մրցաշարի կազմակերպիչներ, բարերարներ Արմեն եւ Թաթուլ Ղարսլյանները:

Մրցաշարին մասնակցում էին շրջանի 8 գյուղերի՝ Հեշտիայի, Փոքր Խանչալիի, Օրոջալարի, Մեծ Խանչալիի, Խոջաբեկի, Ժդանովկանի, Գանձայի եւ Ջիգրաշենի թիմերը: Մրցաշարում առաջին տեղը զբաղեցրեց Ժդանովկան գյուղի թիմը, որին հանձնվեց գավաթը, իսկ 2-րդ եւ 3-րդ տեղը զբաղեցրած թիմերին հանձնվեցին մեդալներ եւ հուշանվերներ:

ՖԻՖԱ-Ի ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐ՝ ԼԱՆՋԽՈՒԹԻԻ «ԳՈՒՐԻԱՅԻՆ»

Ֆուտբոլի միջազգային ֆեդերացիան (ՖԻՖԱ) լրացուցիչ տուգանք է սահմանել վրացական «Գուրիա» ֆուտբոլային ակումբին, որն առանց այդ էլ ուներ գրեթե կես միլիոն պարտք:

Ինչպես պարզվեց, ակումբը բրազիլական ֆուտբոլային ակումբներից մեկին վճարելու է 40500 եվրո, իսկ ՖԻՖԱ-ի օգտին՝ 5 հազար շվեյցարական ֆրանկ:

Խոսքը վերաբերում է բրազիլական լեգեոններին, որը 2016 թվականին խաղացել է վրացական այդ ակումբում: Ակումբը, որը պատրաստել էր այդ խաղացողին, բողոքով դիմել է ՖԻՖԱ-ին եւ, ի պատասխան ֆուտբոլային կանոնադրության խախտման, «Գուրիայից» պահանջել հատուցում:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan.press@gmail.com

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445